



## **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 11-Ա**

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՏԱՎԱՋԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍԱՍՈՒՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ, ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԼՈՒՍԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ, ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՌՈՒԴՈԼՖ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ, ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՆ ԴՐՈՇՄԱԿՆԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, Հանրապետության նախագահի 2023 թվականի մարտի 23-ի թիվ ՆՀ-104-Ա, թիվ ՆՀ-105-Ա և թիվ ՆՀ-106-Ա, մարտի 24-ի թիվ ՆՀ-110-Ա, թիվ ՆՀ-111-Ա, թիվ ՆՀ-112-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

### **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատավոր Արմեն Պողոսյանին, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատավոր Արտավազդ Կարապետյանին, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատավոր Սասուն Մխիթարյանին, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Լուսինե Ալավերդյանին, Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ռուդոլֆ Ավագյանին և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Անի Դանիելյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

2. Հակակոռուպցիոն դատարանի դատավորին տրամադրել Հակակոռուպցիոն դատարանի անվանմամբ «14» հերթական համարով դրոշմակնիք:

#### **Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2023թ. մարտի 27  
ք. Երևան